

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2014 թվականի հուլիսի 4-ին Նոր Խարբերղի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի, նրաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչներ:

ԼՄԵՑԻՆ- Արարատի մարզի Նոր Խարբերղ համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2014 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՅ, որ

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Նոր Խարբերղի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 243 դիմում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 3750 տեղեկանք, ստացել 30-ից ավելի պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Ծաբայթը նրկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտգրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել թունաքիմիկատներ:

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ՝ 1913.0 հազար դրամ.

բ/ գույքահարկ՝ 5379. հազար դրամ.

գ/ տնդական տուրք՝ 988.0 հազար դրամ.

դ/ ոչ հարկային եկամուտներ՝ 1172.0 հազար դրամ:

Համայնքում հրականացվել են մի շարք միջոցառումներ.

հանդիսավորությանը նշվել է մարտի 8-ը՝ Սահմանադրության օրը, սեպտեմբերի 21-ը՝

Անկախության հռչակման օրը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2095.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն.

Հուղարկավորության նպաստ՝ 1850.0 հազար դրամ.

Համայնքում նախադարձական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 12500.0 հազար դրամ.

Երաժշտական դպրոցին 6552.1 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է՝ 600.0 հազար դրամ.

Բարեկարգվել և մասնակի ասֆալտապատվել են համայնքի կենտրոնական, «Զոնալ» թաղամասի փողոցների որոշակի հատվածներ :

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան ճանապարհների բարեկարգումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակառուցվածքի տնդադրումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ԿԱԿՈՅԱՆ

